ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **12/12/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Սիմոն Բաբայանը, Արտավազդ Խաչատրյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով,

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 12-ի թվով 17-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի տարածքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության թույլատրելի և արգելված վայրեր սահմանելու մասին /զեկուցող՝ Հ. Զաքարյան/:
3.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
4.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային

գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան /:
5.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան /:
6.Վայք համայնքի Կապույտ գյուղը և հարակից 740 հա հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան /:
7. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
8.Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունված թիվ 59-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
9.Վայք համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ և ԱՐԳԵԼՎԱԾ ՎԱՅՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 2-ի ՀՕ-361-Ն օրենքի 24.4-րդհոդվածի 3-րդ և 10-րդ մասով,

1.Սահմանել, որ մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման), (մեկ կամ մի քանի անիվ, գլանափող ունեցող տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված են էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար), ինչպիսիք են՝ էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջեցներով երթևեկությունը համայնքում թույլատրվում է Վայք համայնքի Վայք քաղաքի ներքաղաքային ճանապարհների և մայթերի օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտնի տեղաշարժման համար նախատեսված ճանապարհին անմիջականորեն սահմանակից տարածքի, երթևեկելի մասին հարող տարածքով (եզրով) և միջանցիկ երթևեկության համար մերձակա տարածքներում (բակեր, կայանատեղեր, փակ տարածքներ): Իսկ համայնքի գյուղական բնակավայրերում նշված միջեցներով երթևեկությունը թույլատրվում է բոլոր ճանապարհներով:

2. Սահմանել, որ մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման), (մեկ կամ մի քանի անիվ, գլանափող ունեցող տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված են էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար), ինչպիսիք են՝ էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջեցներով երթևեկությունը համայնքում չի թույլատրվում Մ-2 միջպետական ճանապարհի Վայք համայնքի Վայք քաղաքով և Սարավան բնակավայրով անցնող ամբողջ երկայնքով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Զառիթափ բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.15433 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-022-0238-0060) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը `5 000 (հինգ հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ /

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ՝

1.1 Վայք համայնքի Վայք քաղաքի, Վ. Սարգսյան փողոց 2/4 հասցեում գտնվող 10-003-0035-0032 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 28112024-10-0012, գաղտնաբառ՝ FW1HU4DHCBZW) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,06 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 1 126 620 (մեկ միլիոն հարյուր քսանվեց հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ:

1.2 Վայք համայնքի Վայք քաղաքի, Ա. Մելիքյան փողոց, 1-ին նրբանցք, 17/2 հասցեում գտնվող 10-003-0004-0410 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 27112024-10-0002, գաղտնաբառ՝ GKRINGIQ7AB9) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,00371 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 69 700 (վաթսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

1.3 Վայք համայնքի Վայք քաղաքի, Երիտասարդական փողոց, 11 հասցեում գտնվող 10-003-0024-0370 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20212024-10-0021, գաղտնաբառ՝ 6C3DXLKSKKYA) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, մակերեսը՝ 0,1000 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 1 877 700 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

1.4 Վայք համայնքի Սարավան բնակավայրի, 1-ին մայրուղի, 6 հասցեում գտնվող 10-039-0001-0013 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 13112024-10-0004, գաղտնաբառ՝ KKAZ2ZCPWBCQ) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,11 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 239 600 (երկու հարյուր երեսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

1.7 Վայք համայնքի Կարմրաշեն բնակավայրում գտնվող 10-027-0101-0058 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 17112020-10-0001, գաղտնաբառ՝ CNQNASD3JSWM) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,65035 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 107 310 (մեկ հարյուր յոթ հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով,

1. Տալ համաձայնություն՝

1.1 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Մարտիրոս բնակավայրում գտնվող, 10-033-0000-0000 կադաստրային ծածկագրով, 0.016308 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ ընդհանուր
օգտագործման) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես
բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

1.2 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Գոմք բնակավայրում գտնվող, 10-019-0327-0006 կադաստրային ծածկագրով, 0.31555 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

1.3 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Գոմք բնակավայրում գտնվող, 10-019-0327-0061 կադաստրային ծածկագրով, 0.32439 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

2. Հաստատել՝
2.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ դեկտեմբերի 2-ի N 2/փ- 473 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ արոտավայր), 10-022-0238-0046 կադաստրային ծածկագրով, 0,6 հա մակերեսով հողամասից 0,044 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

2.2 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի

մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ դեկտեմբերի 2-ի N 2/փ 475 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող), 10-034-0112-0078 կադաստրային ծածկագրով, 1,04056 հա մակերեսով հողամասից, 0,1 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

3.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊՈՒՅՏ ԳՅՈՒՂԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ 740 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանի 11.11.2024 թվականի թիվ 03/11.3/7044-2024 գրությունը,

1.Վայք համայնքի Կապույտ գյուղը և հարակից հողատարածքը ճանաչել, որպես համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ դիմել ՀՀ Կադաստրի կոմիտե սույն որոշման մեջ նշված գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու

չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 18 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

1.1 Լիլիթ Սամվելի Դիմաքսյան՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
1.2 Օֆելյա Հայկի Հովսեփյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
1.3 Խաչիկ Մայիսի Առաքելյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ,
1.4 Միեր Ռոբերտի Մարտիրոսյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ,
1.5 Զինա Արամի Սողոմոնյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ,
1.6 Անահիտ Սուրիկի Ավագյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ,
1.7 Գայանե Գառնիկի Վարդանյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,
1.8 Նորավարդ Հրանդի Միքայելյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,
1.9 Քրիստինե Սողոմոնի Ավետիսյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.10 Արեգնազան Հայրիկի Ավագյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.11 Հռիփսիմե Բուդաղի Հովհաննիսյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.12 Օհան Ազնիվի Օհանյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.13 Մարիամ Սամվելի Զարգարյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.14 Սայաթ Ռաֆիկի Վարդազարյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.15 Նարինե Օնիկի Աթոյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.16 Սիրան Կիրովի Դովլաթյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.17 Նաիրա Ջոնիկի Գևորգյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.18 Այծեմնիկ Ազնիվի Խաչատրյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.19 Հմայակ Ռազմիկի Ստեփանյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.20 Գևորգ Վահանի Համբարձումյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ,
1.21 Հասմիկ Սմբատի Մուրադյան՝ 20 000(քսան հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 59-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի N 2292-Ա հրամանի համաձայն սույն թվականի հոկտեմբերի 9-ին Վայքի համայնքապետարանում

կադրային գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքները և Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/08.2/7813-2024 գրությունը.

1. Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի՝ ««Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 59-Ն որոշմամբ հաստատված հավելվածից հանել 29-րդ, 30-րդ և 63-րդ կետերը, 62-րդ կետից հանել «և (կամ) առանձնացված», 64-րդ կետից՝ «Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումները, ինչպես նաև» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի փետրվարի 14–ին, ժամը՝ 16:00–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

Ավագանու անդամներ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ավագանու անդամներ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____